

ԻՆՉՆ Է ԱՄԵՆԱԿԱՐԵՎՈՐԸ

Ի՞նչ է Սերը

Մաս 1

«Մի հարուստ մարդի արտը առատ պտուղ տվավ: Եվ նա իր մտքումը մտածում էր և ասում. Ի՞նչ անեմ, որ տեղ չ'ունեմ որ իմ պտուղներն այնտեղ ժողովեմ: Եվ ասաց. Այս կ'անեմ. Իմ շտեմարանները կ'քանդեմ, և ավելի մեծերը կ'շինեմ, և իմ բոլոր բերքերն ու բարիքները այնտեղ կ'ժողովեմ: Եվ իմ անձին կ'ասեմ. Ով անձ, շատ բարիքներ ունես շատ տարիների համար ամբարված. Հանգստացիր, կեր, խմիր, զվարճացիր: Բայց Աստված նրան ասաց. Անմիտ. Հենց այս գիշեր հողիդ քեզանից ետ կ'պահանջեն. Ապա այս որ պատրաստեցիր՝ ո՞ւմ կ'լինի: Այսպես էլ նա՝ որ իր անձի համար գանձ է հավաքում, և Աստծով չէ հարուստ:» Ղուկաս 12:16-21

«Քրիստոս Հիսուսումը... հավատքը որ սիրով գործում է:» Գաղ. 5:6

Եթե ես չեմ ապրում Սիրո կյանքը...

1. Ինչ էլ որ ասեմ՝ կարևոր չէ

«Եթե մարդկանց և հրեշտակների լեզուներով խոսեմ, բայց սեր չ'ունեմ, ես եղա ձայն հանող պղինձ, կամ հնչեցող ծնծղա:» Ա Կորնթացիս 13:1

2. Ինչ էլ որ գիտեմ՝ կարևոր չէ

«Եվ եթե մարգարեություն ունենամ, և գիտենամ ամեն խորհուրդները և ամեն գիտությունը. բայց սեր չ'ունեմ, ոչիչ եմ:» Ա Կորնթացիս 13:2

3. Ինչի էլ որ հավատում եմ՝ կարևոր չէ

«Եվ եթե ամեն հավատքն ունենամ, մինչև սարերն էլ տեղափոխելու, բայց սեր չ'ունեմ, ոչիչ եմ:» Ա Կորնթացիս 13:2

4. Ինչ էլ որ նվիրեմ՝ կարևոր չէ

«Եվ եթե իմ ամեն ապրանքներն աղքատներին ուտեցնեմ. բայց սեր չ'ունեմ, ես ոչիչ օգուտ չեմ ունենալու:» Ա Կորնթացիս 13:3

5. Ինչ էլ որ անեմ՝ կարևոր չէ

«Եվ իմ մարմինը մատնեմ որ այրվի, բայց սեր չ'ունեմ, ես ոչիչ օգուտ չեմ ունենալու:» Ա Կորնթացիս 13:3

Ի՞նչ է Սերը

• Սերը հրաման է

«Եվ սա է սերը, որ նրա պատվիրանքների համեմատ գնանք, և սա է պատվիրանքը, որ ինչպես լսեցիք սկզբիցն՝ այնպես գնաք:» Բ Հովի 1:6

• Սերը ընտրություն է

«Սերին հետեվեցեք...» Ա Կորնթացիս 14:1

• Սերը վարվելակերպ է

«Չ'սիրենք խոսքով և ոչ էլ լեզվով, այլ գործով և ճշմարտությունով:» Ա Հովհաննես 3:18

• Սերը պարտավորություն է

«Աստված սեր է, և ով որ մնում է սերի մեջ, Աստծո մեջ է բնակվում, և Աստված նրանում:» Ա Հովհաննես 4:16

Ինչպե՞ս կառուցել Սիրո կյանք

1. Սովորի՛ր ի՞նչպես է հասուն Սերը գործում և արձագանքում

2. Յուրաքանչյուր օրդ սկսի՛ր սիրելու մասին հիշեցումով

3. Անգիր սովորի՛ր թե ինչ է ասում Աստծո խոսքը Սիրո մասին

4. Վարժեցրու՛ք քեզ վարվել սիրով և անեսասիրությամբ

5. Նեցուկ գտի՛ր ուրիշ սիրող անձերից

«Եվ սերով գնացեք, ինչպես որ Քրիստոսն էլ մեզ սիրեց, և իր անձը մեզ համար մատնեց, պատարագ և զոհ Աստծո անուշ հոտ լինելու:» Եփեսացիս 5:2

«Ապա ուրեմն մնում է հավատք, հույս, սեր. այս երեքը, և սրանցից մեծը սերն է:» Ա Կորնթացիս 13:13

Հաջորդ Քարոզի Թեման:

ՍԵՐԸ ԲԱՐԻ Է
Հովիվ Սարո Խաչիկեան